



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

2 1962.1

X

899.962.1

q-72



899.9621-3


Վրաց գրականության միջ

№ 8

9-72

ԵՍԿՈՐ ԳՕԳԵՐԱՆՉՎԻՐ

Ի՞ՆՉ ԱՐԱՆ ԾՐՐՈՑԻ ԵՐԿԸ



ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Թարգմ. Ղ. Կ.

Հեղինակի պատկերով, համառօտ կենսագր. և ութ նկարով:

ԹԻՖԼԻՍ

2011-05

№ 8 Վրաց գրականության համալսարանի № 8


899.962.1

7-72

ԵՍՍՏՐ ԳՐԱԳԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՍԱՏ

ար

ԻՆՉ ԱՐԱՆ ՕՐՈՐՈՅԻ ԵՐԿԸ



Թարգմ. Ղ. Կ.

ԳԻՆՆ Է 10 400.

1002
6853



Հեղինակի պատկերով, համառոտ կենսագիր, և ութ նկարով:

Թ Ի Ֆ Լ Ի 2

Եկեթաւարտ սպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Մաղաթեան փողոց. № 5.

1907

(233)

ՆԱԿՈՒՔ ԳՕԳԵՐԱՇՎԻԼԻ



Ն. ԳՕԳԵՐԱՇՎԻԼԻ

կազմել ու հրատարակել: Իսկ պաշտօնից արձակուելուց յետոյ աւելի եւանդով նուիրուեց այդ գործին: Նա հրատարակեց մի շարք դասագրքեր և ընթերցանութեան գրքոյկներ: Յետոյ հրատարակեց ուսաց լեզուով դասագիրք վրաց ուսումնարաններին համար: Գրել է նաև բազմաթիւ մանկավարժական և հրատարակարժանական յօդուածներ վրաց և ուսաց լեզուներով: Նրա մի քանի յօդուածները արտատպուած են առանձին գրքոյկներով: Վրացերէն լեզուով հրատարակած գրքերի օրինակների թիւը անցնում է կէս միլիօնից, իսկ ուսերէն լեզուով երկու հարիւր հազարից: Վրաց պատմութեան մէջ այս առաջին օրինակն է, որ մի հեղինակի գրուածք այսքան տարածուած լինի: Գօգերաշվիլու պատմութեան գրքի խաւոր ուղղութիւնը մարդասիրական է: Այս տէնդէնցիան պարզ արտայայտուած է այն փոքրիկ պատմութեան մէջ, որ ամենակարճ ժամանակում տարածուել է տասնեակ հազարաւոր օրինակից աւելի վրաց ընտանիքներում: Յոյս ունեմ որ հայ ընտանիքներում էլ կ'ընդունուի: Եւ կը կարգացուի նոյն յափշտակութեամբ և ոգևորութեամբ, ինչպէս որ կարգում են վրացի ծնողներն ու նրանց երեխաները:

ԻՆՉ ԱՐԱՒ ԹՐՐՐՕՅԻ ԵՐԳԸ

(Պատմութեամբ)

ԳԻՆՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Եթէ Թիֆլիզից դէպի արևելք գնալու լինէք, մի օրուայ ճանապարհորդութիւնից յետոյ կը հանդիպէք մի երկար լեռան, որ կոչուում է Յիվի: Եթէ բարձրանաք այդ սարի վրայ և նայէք դէպի արևելք, ձեր աչքի առաջ կը բացուի մի անազն տափարակ, որ ամբողջապէս ծածկուած է կանաչ ծովի նման՝ մեծ և փոքր խաղողի այգիներով: Այդ տափարակի մէջտեղը կը նկատէք մի երկար պսպղուն շերտ, որ տարածուած է հիւսիսից դէպի հարաւ: Ահա այդ տափարակը ներկայացնում է Կախէթի դաշտը, իսկ պսպղուն շերտը—Ալազան գետը, որ Կախէթը բաժանում է համարեա երկու հաւասար մասերի. այս կողմի կէս մասը կոչուում է՝ աջ ափ, իսկ հակառակը՝ ձախ ափ: Գետի աջ ափին, արևելեան կողմից, տարածուած են մեծ և բարձր լեռներ, որոնք բաժանում են Կախէթը Դաղստանից: Դաղստանը գտնուած է այդ լեռների ետևը:

Եթէ դետի ձախ կողմը ուշադրութեամբ նայելու լինէք, սաղի ստորոտում ներս ընկած կը տեսնէք մի մեծ հարթ տարածութիւն, որի վրայ վարուցանք են անում: Բայց եթէ մօտենաք և լաւ գննէք, դիւրութեամբ կը նկատէք հողաբաժինների սահմանների վրայ քարէշինութիւնների մնացորդներ: Այդ մնացորդները վկայում են, որ այդտեղ մի ժամանակ գիւղ է եղել:

ՎԱՇՂԵՒՎԱՆ ԳԻՒՂԸ

Այն, հին ժամանակներում հէնց այդտեղ գտնուում էր մի բաւական մեծ գիւղ, որ կոչւում էր Վաշղեւան: Արեւմտեան կողմից գիւղը շրջապատուած էր խաղողի մեծ և փոքր այգիներով, իսկ արևելեան կողմից համարեա թէ շփուում էր սարին, որ ծածկուած էր սառեւրախիտ անտառով: Գիւղի մէջտեղից խիտ անտառի շնորհիւ գետնից առատութեամբ դուրս էր ցայտում՝ շատրուանի նման մի վճիտ աղբիւր, որի սառնորակ ջուրը ամբողջ գիւղի սիրելի խմելիքն էր: Գիւղը քարաշէն էր, որ և վկայում էր գիւղի հարուստ լինելը: Եւ իրաւ, այն ժամանակ Վաշղեւան և ամբողջ Կախէթը չգլխէր, թէ ի՞նչ բան է պարտքը, որի մէջ այժմ ամբողջապէս թաղուած է Կախէթը:

Վաշղեւանի ծայրին, արևելեան կողմը, անտառին մօտիկ, կառուցուած էր մի երկյարկանի հայկապ սպարանք՝ շրջապատուած գեղեցիկ վանդակներով: Այս սպարանքը պատկանում էր իր հարստութեամբ և հիւրասիրութեամբ ամբողջ Կախէթում յայտնի իշխան Զուրաբ Քարթուկաձէին: Նա ամուսնացել էր Քարթլից բերած օրփորդ Մագդանի հետ: Կազմուածքով թոյլ էր Մագդանը, սակայն ոսկի սիրտ ունէր: Նրանց տանը ամեն օր այնքան կերակուր էր պատրաստուում, որով երկու-երեք ընտանիք կարող էր կերակրուել. բայց յաճախ Մագդանի չափազանց բարեսրտութեան պատճառով կերակուրը իրանց չէր բաւականանում, պակասում էր: Նա իր տանից առատութեամբ բաժին էր ուղարկում՝ ամեն մի հիւանդի, աղքատի և կարօտելի համար: Միաժամանակ Մագդանը ունէր նաև հիանալի ձայն, որով յայտնի էր ամբողջ շրջակայքում: Նրա երգեցողութիւնը խոր տպաւորութիւն էր գործում

մարդու սրտի վրայ և այնպէս հաճոյք էր ազդում, որ լսողը իր կեանքում երբէք չէր մոռանում: Զուրաբն էլ գեղեցիկ կերպով թառ էր ածում: Երբ ամուսինը թառ էր ածում



և կլինը երգում, մարդուս ականջը սրանից ուրիշ լաւ բան չէր կարող լսել:

Զուրաբը և Մագդանը մօտ հինգ-վեց տարուայ ամուսնացած էին. ունէին նրանք միայն մի աղջիկ, Քէթօ անունով, որ երեք տարեկան էր: Շատ սիրելի երեխայ էր

Քէթօն. գեղեցիկ, սպիտակ բամբակի քուլայի նման, կայտառ, ուրախ և բաղքը շաղակրատ: Միաժամանակ սրտ հետ Քէթոյին սաստիկ դուր էր գալիս իր մօր երգեցողութիւնը, որ յաճախ երգել էր տալիս և լսում էր շնչակտուր ամբողջ ժամերով: Ամեն տեսնող մի անգամից սիրահարւում էր երեխայի վրայ: Ծնողները նրանով էին ապրում և գժուածի պէս սիրում էին:

ԼԵԶԳԻՆԵՐԸ ԿԱԽԵԹԻԱՅՈՒՄ

Վաշլևվան և առհասարակ Կախէթիա այն ժամանակները շատ յաճախ էին երթևեկում լեզգիները: Հին ժամանակներից սկսած Դաղստանի և Վրաստանի մէջ թագաւորում էր մեծ համերաշխութիւն: Վրաստանի ամեն մի թշնամին Դաղստանի թշնամին էր և նրա ամեն մի բարեկամը նաև միևսի բարեկամը: Ոչ ոքի մտքով չէր անցնի, որ լեզգիները երբեկից կարող էին ընդհարուել Վրացոց հետ:

Սակայն այդ տեղի ունեցաւ յետագայում, երբ լեզգիները մահմեդականութիւն ընդունեցին, իսկ Վրաստանը Ռուսաստանի կողմն անցաւ: Հին ժամանակներում վրացիները ուրիշ ոչինչ չէին յիշում լեզգիներից, բացի մեծ յարգանքից և սրտազին բարեկամութիւնից: Այս բարեկամական հարեանութեան պատճառով լեզգիները ազատ երթևեկում էին Կախէթիայում՝ մեծ մասը առևտրական նպատակով: Նրանք վաճառելու համար բերում էին աւելի մահուզեղէն և զէնքեր, որոնց պատրաստելու մէջ յայտնի էին:

ՔԷԹՈՅԻՆ ՓԱԽՅՆՈՒՄ ԵՆ

Վաղուց ի վեր Վաշլևվան գիւղն էին գալիս երկու կարճահասակ լեզգիներ առևտուր անելու: Սրանք այնպիսի

ողորմելի տեսք ունէին, որ նոյն իսկ լեզգիներն էլ ծաղրում էին նրանց: Այդ պատճառով էլ ոչ ոք նրանցից վատ բան չէր սպասում. սակայն նրանք շուտ արդարացրին վրացերէն ասած առածը՝ «գլուխը կախ արած, պոչը երկարացրած»...

Մի անգամ այս լեզգիներից մէկը իր ընկերին ասաց.

— Գիտէս, ինչ անցաւ մտքովս. այսքան ժամանակ է մենք առևտուր ենք անում, բայց ի՞նչ դուրս եկաւ: Ելի նոյնպիսի աղքատներ ենք, ինչպէս որ եղել ենք, դարձեալ նոյնպիսի շան կեանք ենք վարում, ինչպէս որ առաջ: Իսկ եթէ մենք այլ կերպ վարուենք, միանգամից կը հարստանանք և կ'ազատուենք այսքան ցաւից և թափաւելուց:

— Ի՞նչպէս, հարցրեց ընկերը:

— Զուրաբ Քարթուելաձէն հօ հարձուտ է:

— Հա՛, հարուտ է, բայց ի՞նչ օգուտ մեզ նրա հարըստութիւնից:

— Օգուտ կայ, եթէ խելքով ժաժ գտնը: Այս հարուտ մարդը հօ գժուածի պէս է սիրում իր միակ աղջկան:

— Սիրում է, բայց ի՞նչ դուրս կը գայ այդտեղից:

— Այն դուրս կը գայ, որ եթէ մենք երեխային մի կերպ փախցնենք և գերի տանենք Դաղստան, ի՞նչ ես կարծում, միթէ Քարթուելաձէն իր հարստութիւնը կը խնայի, որ գերութիւնից ազատի իր որդուն, ի հարկէ ո՛չ:

Ընկերը հաւանութիւն տուաւ նրա մտքին և վճռեցին հետամուտ լինել և յարմար բոպէին ձեռքից բաց չթողնեն, ծածուկ յափշտակեն Քարթուելաձէի Քէթոյին և գերի տանեն Դաղստան:

Մենք արդէն գիտենք, որ Վաշլևվան գիւղը արևմտեան

կողմից շփուում էր ստուերախիտ անտառով ծածկուած մի սարի: Այս անտառի ծայրին շատ յաճախ զբօսնում էր Քարթուերաձէի ընտանիքը, քանի որ նրանց տունը շատ մօտ էր գտնուում: Մի անգամ Քէթոյի դայեակը երեխայի հետ երեկոյեան դէմ գնաց անտառի կողմը զբօսնելու: Երբ անտառին մօտեցան, երեխան ծառի տակ մի ճնճողակ նրկատեց և վագեց դէպի այն կողմը: Ծնճողակը ցատկեց և ծառերի միջով անյայտացաւ: Երեխան յետեից ընկաւ և այսպիսով բաւականին հեռու գնաց անտառի ներսը, իսկ դայեակը հետևում էր նրան: Յանկարծ որտեղից որ էր յայտնուեց մի լեզգի, յարձակուեց Քէթոյի վրայ, մի ձեռքով բռնեց, իսկ միւսով նրա բերանը փակեց: Դայեակը ձայն չկարողացաւ հանել, որովհետեւ հէնց այդ ժամանակ երկրորդ լեզգին մահակը նրա գլխին իջեցրեց և դայեակը ուշաթափ ընկաւ գետնին: Քէթոյին փախցրին ու տարան:

ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿ

Քէթոյի ծնողները բոլորովին հանգիստ էին: Նրանք կարծում էին թէ իրանց դուստրը և դայեակը հարևանների մօտ են և իր ժամանակին կը վերադառնան: Ե՛րբ մուլթը պատեց և դայեակը երեխայի հետ չերևաց, նրանք մտատանջութեան մէջ ընկան և հարևանների մօտ ուղարկեցին հարցնելու. բայց ո՞րտեղից կը գտնէին: Ամեն տեղ ստում էին—չենք տեսել: Այն ժամանակ սարսափահար ծնողները ճրագներով սկսեցին փնտրել գիւղի շուրջը: Շատ երկար որոնելուց յետոյ վերջապէս պատահեցին անտառում դայեակին, որ ուշաթափ անշարժ ընկած էր ծառի տակ. սակայն զով գիշերը և աղմուկը ուշքի բերին դայեակին և կենդանացրին: Դեռ բոլորովին ուշքի չէր

եկել, երբ շփոթուած ու կատաղած Մագդանը գոչեց. ուր է Քէթօն: Դայեակը թոյլ ձայնով և կցկտուր պատմեց, թէ ինչպէս փախցրին Քէթոյին: Այս լսելուն պէս Մագդան ուշաթափուեց: Զուրաբին սարսափ պատեց. բայց նա արիաբար կարողացաւ դիմադրել վշտին, յաղթեց ու ձայն տուաւ.


—Դէհ, շուտով, սուրհանդակ:

Այն ժամանակներում ամեն մի տղամարդ ամեն տեսակ գէնը ունէր իր տանը և վարժ կուսող էր, որովհետեւ կարիք եղած դէպքում Վրաստանի թագաւորը բոլորին էլ դիմում էր օգնութեան: Հէնց այդ պատճառով Զուրաբի կանչելուց յետոյ մի ժամ չանցած նրա տան առաջ շարուած էին մօտ քսան հոգի ոտից գլուխ զինուած... Արագութեամբ գուրս եկաւ նաև զինուած Զուրաբը, ողջունեց և առաջնորդեց նրանց:

Ամպամած ու սաստիկ մուլթ գիշեր էր: Քէթոյին փախցնելուց յետոյ բաւականին ժամանակ էր անցել: Դաղըստանի կողմն անցնելու համար անտառներում և լեռներում կային միայն նեղ շաւիղներ, որոնցով անփորձ մարդու համար մուլթ գիշերով անցնելը շատ դժուար էր: Քէթոյին փախցնող լեզգիները այս շաւիղները այնպէս դիտէին, որ մինչև անգամ աչքները փակած էլ կարող էին անցնել նրանցով: Իսկ Զուրաբը և նրա խումբը համարեա թէ այդ կողմերում չէին եղել: Հէնց այդ պատճառով լեզգիները ամբողջ գիշեր անդադար և անարգել առաջ անցան մեծ տարածութիւն, թողնելով Զուրաբի խմբին, և փախցրած Քէթոյին հետևեալ օրը հասցրին Դաղստան: Իսկ Զուրաբ Քարթուերաձէն ստիպուած եղաւ իր շքախմբով, ունայն ձեռքով և սաստիկ տխուր վերադառնալ:

ՔԷԹՈՅԻՆ ԾԱԽՈՒՄ ԵՆ ԿՈՒՍՍԵԿԱԼԻՆ

Լեզգիները նախ և առաջ Քէթոյին անցկացրին Դադատանի մի մեծ գիւղով, որ գտնուում էր Կախէթիայի սահմանի մօտ: Այս գիւղում բնակւում էր մի հարուստ



կուսակալ, որին հպատակւում էր Դադատանի ամբողջ արևմտեան մասը: Նրա կինը նոյնպէս լեզգու աղջիկ էր,

որ օժտուած էր այրական քաջութեամբ և միաժամանակ սաստիկ քնքուշ սիրտ ունէր: Սրանք շատ ժամանակուայ ամուսնացած էին, բայց որդի չունէին, և վճռել էին մի որևէ երեխայի որդեգրել:

Երեկոյեան ժամն էր, երբ նրանց տան առաջից լեզգիները Քէթոյին անցկացրին: Կուսակալը և նրա կինը, տան առաջ ծածկոյթի տակ նստած էին: Նրանք տեսան երկու անցնող լեզգի և նրանցից մէկի մէջքի վրայ նկատեցին կաշուէ պարկ, որի միջից երևում էր երեխայի գլուխը և երեսը: Կանչեցին իրանց մօտ: Լեզգիները խորին ակնածութեամբ մօտեցան և գլուխ տուին, իբրև իրանց տիրոջ՝ հրամայողին: Լեզգիներից հարցուփորձ արին երեխայի մասին մանրամասօրէն: Սրանք յանդիմանելուց վախեցան և այդ պատճառով ճշմարտութիւնը ծածկեցին, ասելով՝ «այս երեխան ճանապարհին անտառում գտանք»:

Փոքրիկ Քէթօն երկար ճանապարհորդելուց և քաղցից սաստիկ թուլացել էր և հագիւ էր կարողանում աչքերը բաց ու խուփ անել: Սակայն այս թուլութիւնը նրան աւելի ևս սիրելի երեխայ էր դարձնում: Հէնց որ կուսակալը և նրա կինը երեխային տեսան, անմիջապէս զբաւուեցին: Կուսակալի կինը հարցրեց լեզգիներին:

— «Ի՞նչ տանք որ այս երեխան մեզ տաք»:

— «Ի՞նչ պիտի տաք, աղջիկ պարոն, եթէ ցանկանում էք, ձեզ փէշքաշ լինի»:

Կուսակալը վերկացաւ, ներս մտաւ սենեակը դուրս բերաւ մի մեծ քսակ լի ոսկիներով և յանձնեց լեզգիներին: Կուսակալի կինը լեզգու ձեռքից առաւ Քէթոյին և իսկոյն կրծքին սեղմեց, լեզգիները շնորհակալութիւն յայտնեցին ու հեռացան:

Մայրական գգուանքը շուտ կենդանացրեց նուազած

երեխային: Չնայած որ ամեն ինչ նրան խորթ էր երեւում, սակայն տխմար լեզգիներին ձեռքին այնքան չարչարուելուց յետոյ կուսակալի կնոջ գգուանքն ու խնամքը իրօք սփոփանք պատճառեցին նրան: Սկզբներում Քէթօն այնուամենայնիւ ամեն բանի վրայ սառն էր նայում և յաճախ լաց էր լինում, երբ իր ծնողներին, կամ իւրայիններին և իրանց գիւղն էր մտաբերում: Բայց կուսակալը և իր կինը այնպէս քաղցր, սիրալի և փաղաքշանքով էին վարւում Քէթոյի հետ, որ շուտով մոռացնել տուին ամեն ինչ:

Քէթօն Լեզգոյի Աղջիկ է ԴԱՌՆՈՒՄ

Երեխան ներկայով է ապրում: Նա անդադար, ամեն օր աճում է, հոգևով ու մարմնով առաջ է գնում, մեծանում. նա զգում է իր այս աճումը, առաջ գնալը և իրան բախտաւոր է զգում: Նա լի բերկրանքով է նայում երկրներին ու գետներին, բնութեան և մարդկանց: Քանի որ երեխան գոճ է ներկայով, նա էլ ոչ անցեալի և ոչ էլ ապագայի մասին կը մտածի. այդ պատճառով անցեալի մնացորդ յիշողութիւնը նրա հոգու և մտքի մէջ շատ շուտ է թուլանում, աղօտանում և ապա կարծես թէ բոլորովին ջնջւում. իսկ ներկան բոլոր ուժով ներգործում է նրա վրայ և ամբողջապէս անցեալի տեղը բռնում անբաժան:

Քէթոյի հետ էլ այդպէս պատահեց: Կուսակալը և նրա կինը այնպէս սիրուեցին Քէթոյից, որ հետզհետէ նրա մտքի մէջ հանգրբին հարազատ ծնողների սէրը, յիշողութիւնը և զէմքերը: Երկու-երեք տարուց յետոյ Քէթօն իսկական ծնողներին տեղ էր ընդունում կուսակալին և նրա կնոջը. նրանցով էր ապրում, նրանցով էր ուրախանում:

Հարազատ ծնողների հետքը կարծես թէ բոլորովին ջնջուել էր նրա յիշողութիւնից: Մայրենի լեզուն Քէթոյի մէջ, կամաց-կամաց օրէցօր տեղի տուաւ լեզգերէնին, որ բռնեց նրա տեղը և հանգրբեց այն: Լեզգիների գիւղը Վաշլիվանի յիշատակը ջնջեց նրա սրտից: Քէթօն շատ երկար զգում էր միայն մի պակասութիւն. Մագանի գեղեցիկ ձայնը, բաղբրահնչիւն երգը այլևս Քէթոյի ականջին չէր հնչում: Բայց վերջը այդ էլ մոռացաւ: Մի խօսքով Քէթոյի հոգու մէջ ներկան թագաւորեց և անցեալը նախ աղօտացրեց և ապա բոլորովին հանգրբեց: Վրացի աղջիկը դարձաւ լեզգու աղջիկ—Կախէթիայի դաւակը Գաղստանի դաւակ:

Քէթոյի լեզգի դառնալուն նպաստեց նաև կուսակալի արձակած այն հրամանը, որով պատուիրում էր, որ ոչ ոք Քէթոյի ականջին չհասցնէ, թէ նա որդեգիր է, այլ թէ՛ հարազատ դաւակ:

Քէթօնի ՀՕՐ ԶՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ի՞նչ էին մտածում, ի՞նչ էին անում այդ ժամանակամիջոցում Քէթոյի անմխիթար ծնողները: Երկար ժամանակ նրանք չգիտէին, թէ ինչ արին լեզգիները իրանց Քէթոյին: Զուրաբը աւելի յաւակնութիւն ունէր կարծելու, որ իր աղջիկը միջին Գաղստանում կը լինէր, քանի որ փախցնող լեզգիները այնտեղից էին և այդ պատճառով այնտեղ էր փնտրել տալիս: Այսպիսով անցաւ երեք-չորս տարի: Վերջապէս մի ծանօթ լեզգի լուր բերաւ, թէ քո աղջիկը այս ինչ կուսակալն է ձեռք ձգել, որդեգրել և սնուցանում, իբրև իր հարազատ զուստը: Զուրաբը պսպրեց կուսակալին՝ «Այդ աղջիկը իմ զուստն է, որին ծածուկ փախցրել են. ինչ որ պահանջես, կը տամ, միայն»

թէ վերադարձնես»։ Կուսակալը պատասխանեց. «Եթէ առաջուց գիտենայի, որ այս երեխան քո դուստրն է, ես ինքս կը վերադարձնէի, բայց այժմ արդէն ուշ է։ Թէ ինձ և թէ կնոջս համար միակ ուրախութիւնն այս աղջիկն է. նա էլ մեզ շատ է սիրում, այս տեղերին սովորել է, ձեզ բոլորովին մոռացել, և այդ պատճառով Քէթոյին յետ չենք կարող տալ, եթէ նոյնիսկ ամբողջ Կախէթիայի հարստութիւնն իմ դռան առջև դիզես»։

Այս տեսակ պատասխանից յետոյ Զուրաբը իր աղջիկը կարող էր միայն ուժով ազատել, կամ որևէ հնարագիտութեամբ։ Իսկ Քէթոյի մնալը Դադատանում նրա ծնողների համար անտանելի էր, որովհետև Մագդանը Քէթոյից յետոյ էլ որդի չունեցաւ։ Քարթուելաձէն շատ անգամ գնաց դէպի Դադատան մօտ քսան զինուած տղամարդով Քէթոյին փախցնելու, բայց ի զուր։ Կուսակալը շատ լաւ էր հասկանում նրա ցանկութիւնը և նպատակը. այդ պատճառով ճանապարհին հանդիպում էին մի այնպիսի տեղ դարան մտած լեզգիներ, որտեղ մի դարան մտածը կարող էր երեսուն. քառասուն տղամարդու ճանապարհը կտրել. իսկ վրացիների բանակի շատութիւնն էլ դժուարացնում էր աննկատելի կերպով մօտենալ մինչև կուսակալի գիւղը։

Երբ այս ճանապարհով ոչինչ չկարողացաւ անել, Զուրաբը հնարագիտութեան դիմեց. ձայն տարածեց, որ բոլորովին սրտից հանել է իր աղջկան և այլևս մտադիր չէ փախցնելու նրա նոր մօրից և հօրից։ Այս ձայնը հասաւ նաև կուսակալին. բայց չնայած դրան, նա սկզբից կասկածանքով վերաբերուեց, սակայն յետոյ հաւատաց, որովհետև երկու տարուայ ընթացքում Քարթուելաձէի կողմից ոչ մի շշուկ չէր լսուում։ Մինչև այդ ժամանակները Քէ-

թոյին մեծ զգուշութեամբ էին գուրս թողնում, իսկ այժմ այն ժամանակուայ լեզգիների միւս աղջիկների նման ազատ գնում էր մի թաղից միւս թաղը իր ծանօթների մօտ։ Այս բոլորը Զուրաբը լաւ տեղեկացաւ ծանօթ լեզգիների միջոցով և ուրիշ տեսակ պատրաստութիւն տեսաւ։

ՀԱՅՐԸ ՓԱԽՅՆՈՒՄ Է ՔԷԹՈՅԻՆ

Ուղիղ տասերորդ դարունն էր անցել այն օրից, ինչ Քէթոյին փախցրել էին լեզգիները։ Անտառը խիտ տերևներով էր ծածկուած և շատ հեշտ էր աննկատելի կերպով հասնել կուսակալի գիւղին։ Զուրաբը կանչեց այնտեղացի լեզգիներից մէկին, որ վաղուցուայ ծանօթ էր և միասին աղ ու հաց էին կերած, նրա առաջնորդութեամբ դնաց, հետը վերցրեց միայն տաս զինուած տղամարդ։ Ամբողջ սարածութիւնը այնպէս զգուշութեամբ անցան, որ մինչև անգամ մի լեզգի չպատահեց ճանապարհին։ Միւս օրը երեկոյեան դէմ հասան կուսակալի գիւղին և անտառում մի յարմար տեղ իջան։ Լեզգին նոյն գիշերը ծածուկ զնաց իրանց գիւղը, նա ամեն ինչ տեղեկացաւ և առաւօտեան կանուխ շատ ուբախալի լուր բերաւ։ Ինչպէս երևաց Քէթօն ամեն առաւօտ անտառի մօտով էր անցնում իր ընկերուհուն տեսնելու։ Այս աղջիկը նախկին ծերունի կուսակալի դուստրն էր, որ սրանից առաջ վախճանուել էր։ Նորատի աղջիկը սաստիկ վշտացած էր հօր մահուան վրայ, այդ պատճառով Քէթօն ամեն օր գնում էր նրան մխթարելու։


Արևը ծագելուն պէս Զուրաբ Քարթուելաձէն մօտեցաւ ճանապարհին, ծածկուեց ծառերի յետև և սկսեց նայել դէպի այն կողմը, որտեղից պիտի անցնէր Քէթօն։

Քարթուերաձէի դիմաց ճանապարհից միւս կողմը բարձրանում էր մի մեծ բլուր, որ գիւղը բաժանում էր երկու մասի—վերին և ներքին թաղերի: Քէթօն անցնելու էր ներքին թաղից այս բլուրի վրայով անտառի միջով և պիտի բարձրանար վերին թաղը: Այս գրութեամբ մնաց բաւական երկար ժամանակ, այնպէս որ Զուրաբը կարծում էր, որ Քէթօն այսօր բոլորովին չէր մտածում վերին թաղը գնալու մասին: Բայց անա հեռուից երևաց աղջիկը, նորահաս, լեզգու շորերը հագին: Զուրաբը աչքերը չորս շինեց և սրտի բաբախումը արագացաւ: Աղջիկը հետքդնեաէ մօտենում էր և Զուրաբը այնպէս սկսեց նայել, կարծես թէ իր քաղցած աչքերով ուզում էր կուլ տալ: Քէթոյի նայուածքը քիչ փոխուել էր, առաջուանից շատ էր մեծացել, բայց երեսի գոյնը և դէմքը բոլորովին նոյն էր մնացել: Հօր սիրտը լցուեց անհուն բերկրանքով, երբ իր Քէթոյին կրկին տեսաւ: Քէթօն հասաւ այն ծառերին, որտեղ Զուրաբն էր ծածկուած: Նա յարմար ժամանակ դատաւ և զգուշութեամբ նրա առջև կանգնեց, որ չվախացնէր: Քէթօն շփոթուեց, վախեցաւ և այժեամի պէս յետ ցատկեց:

—Մի վախենար, աղջիկս, ես քո հայրն եմ, եկայ այստեղ, որ քեզ մօրդ մօտ տանեմ. գնանք տուն, —ասաց Զուրաբը հայրական քաղցր ձայնով: Քէթօն դողալով լսում էր օտարոտի բառեր և չէր կարողանում հասկանալ, թէ ի՞նչ էր ուզում այդ օտար մարդը: Զուրաբը մտածեց, որ եթէ դատարկ խօսակցութեան մէջ ժամանակ կորցնէ, որևէ մէկը վրայ կը հասնէր և բանը կը փշանար. այդ պատճառով արագ մօտեցաւ Քէթոյին, զգուշութեամբ բռնեց և փախցրեց անտառ: Քէթօն սկսեց զարհուրելի աղմուկ բարձրացնել: Գիւղում լսեցին այդ աղմուկը, բայց

թէ ունի էր, կամ սրտեղից էր գալիս, սկզբում չկարողացան իմանալ: Գիւղի մէջ իրարանցում ընկաւ և միքանի մարդ գնացին կուսակալի մօտ: Կուսակալը բացակայ

1002
5589



ում էր, այդ պատճառով ժամանակին չկարողացան յայտնել նրան: Յետոյ երբ պատմեցին այս դէպքը, սատիկ նեղացաւ և ասաց. անկասկած Քարթուերաձէն փախցրած կը լինի աղջիկս, և սուրհանդակ կանչեց: Անմիջապէս

հաւաքուեցան երեսուն զինուած տղամարդ: Դէպի Վաշ-
 ւեկման երեք ճանապարհ էր գնում: Սուրհանդակներին կու-
 սակալը երեք մասի բաժանեց: Տասը տղամարդ ուղարկեց
 մի ճանապարհով, տասը երկրորդ և տասն էլ՝ իր առաջ-
 նորդութեամբ երրորդ ճանապարհով տարաւ: Երեք խումբ
 սուրհանդակները համարեա թէ մինչև Վաշկեկման հասան,
 բայց Զուրաբի և Քէթոյի հետքը բոլորովին չկարողա-
 ցան գտնել. կարծես թէ նրանք գետնի տակն էին անցել:
 Բանը նրանումն էր, որ Զուրաբը իր աղջկան Վաշկեկմանի
 ճանապարհով չէր տարել, քանի որ նրան լաւ յայտնի էր,
 որ սուրհանդակը այս կողմից պիտի հեռուէր: Նա բռնեց
 զէպի հիւսիս տանող ճանապարհը, որ զէպի Կախէթիայի
 վերին գիւղերն էր տանում. հեռուից պտըտել գերադասեց,
 որպէսզի կարողանար անվտանգ տուն հասնել. բայց վայ
 այն ապահովութեան:

Քէթօն ՍՍՍՏԻԿ ՏԱՆՁԻՈՒՄ Է

Զուրաբը մտածում էր, որ Քէթօն սկզբներում չի
 կարող ճանաչել մօրը և տխուր կը լինէր: Միաժամանակ
 հաւատացած էր, որ Քէթօն շուտով ուշքի կը գայ, նախ
 կը ճանաչի իր հօրը, յետոյ մօրը, իր մած կութիւնը կը յի-
 շէ և կուրախանայ, բայց սաստիկ սխալուեց: Քէթոյի
 տխրութիւնը ամբողջ ճանապարհին անսահման էր: Արտա-
 սուքը նրա աչքերից հեղեղի նման թափուում էին անդա-
 դար և այնպէս էր հառաչում, կարծես թէ ուզում էր լերդ
 ու թոքը դուրս թափել: Հայրը սաստիկ տանջուում էր իր
 աղջկայ այդ տեսակ դրութիւնից. աշխատում էր մի կերպ
 փարատել նրա վիշտը, բայց իզուր: Նրա ամեն մի փաղաք-
 շանքը Քէթոյի վիշտը աւելի ևս շատացնում էր: Նա Զու-

րաբին նայում էր իբրև իր ոխերիմ թշնամուն, որ հեռա-
 ցրեց իր սիրելի ծնողներից, իր սիրելի հայրենիքից և ուր
 որ գերի էր տանում: Հէնց այդ պատճառով նրա ամեն մի
 քաղցր խօսքը նեախ նման ծակում էր նրա սիրտը: Զու-
 րաբի միակ յոյսն այն էր, որ գուցէ տուն հասնելով ուշ-
 քի գայ, ճանաչէ մօրը, իր տուն ու տեղը, զիւղը և սիր-
 տը փափկի:

Զուրաբը այս մտքով էր յուսադրուած, երբ նա իր
 տան դուռը բաց արաւ, ներս տարաւ Քէթոյին և իր կնոջ
 ուրախ-ուրախ առաց. «Ահա, Մագդան, բերի քո Քէթոյին»:
 Ուրախութիւնից յափշտակուած Մագդանը վազեց զէպի
 գաւակը, բայց ուրախութիւնը վշտի փոխուեց, երբ նայեց
 իր որդու զէմքին, որ արտայայտուած էր անասելի վիշտ:
 Մագդանը ուրախ-ուրախ գրկեց Քէթոյին, կամենալով փա-
 րատել նրա վիշտը, բայց իզուր: Քէթօն սառցի նման սառն
 էր, քարի պէս անզգայ և ոչ մի ազդեցութիւն չունեցաւ
 նրա վրայ մայրական ջերմ հանդիպումն ու գգուանքը: Այլ
 սպասածից բոլորովին հակառակ արդիւնք ունեցաւ: Մագ-
 դանի փաղաքշանքը կենդանի կերպով նրա աչքի առաջ
 պատկերացրեց իր մօրացեղի՝ կուսակալի կնոջ զէմքը և
 սէրը, և նրա վիշտը աւելի ևս սաստկացաւ և աչքերից
 սկսեցին առուակի պէս տաք արցունքներ հոսել:

—Քն ծնող մայրդ եմ, որդի, սա էլ քո հարազատ
 հայրդ է, ասում էր Մագդանը Քէթոյին... Ահա այն տու-
 նը, որի մէջ ծնուեցար դու և չոչ էիր անում փոքր ժա-
 մանակդ, ահա քն փոքրիկ օրօրոցը, որի մէջ պառկում էիր.
 ահա քն ոխրած այգին, որի մէջ առաւօտունից մինչև ե-
 րեկոյ ճեմում էիր: Բայց Քէթօն ոչ մի բանի վրայ ուշա-
 գրութիւն չէր դարձնում: Նրա սիրտն ու հոգին ամբողջա-
 պէս պաշարուած էր խորին վշտով և տանջանքով: Սակայն

Մագդանը չէր յուսահատուում, որ Քէթօն այսօր կամ վաղը կը յիշի իր մանկութիւնը, կը ճանաչի ծնողներին և կը վերադառնայ նրանց:

Անցաւ մի քանի շաբաթ, սակայն ծնողների այդ յոյսը



չիրագործուեց: Քէթօն համարեա թէ ոչինչ չէր ուտում, խմելով էլ շատ քիչ էր խմում, խորը հառաչում, յաճախ լաց էր լինում և գիշերներն էլ քուն, հանգստութիւն չունէր: Մաշուեց, գեղնեց և մեռելի գոյն ստացաւ: Նա լուռ

նստած էր տախտի վրայ, մեծ մասամբ աչքերը փակած և նրա ուշքն ու միտքը սլանում էր այնտեղ—Դադասան՝ կուսակալի և նրա կնոջ մօտ, իր հասակակից ընկերուհիների և նրանց գիւղը: Իր շուրջը գտնուածը և թէ ամեն ինչ խորթ էր թւում, չէր հաւանում, կարծում էր թէ բոլորը իր թշնամիներն են, ամեն ինչ ատում էր, զզւում: Շատ տեսակ հնարք գործ գրին, որ մի կերպ յիշեցնէին մանկութիւնը Քէթօյին: Մայրը մի քանի անգամ տարաւ անտառ. ձիշտ այնտեղ, որտեղից փախցրել էին, տարաւ երեկոյեան այն ժամին, երբ նրան փախցրին, տարաւ աղբիւրի գլուխը, ուր Քէթօն յաճախ նստած էր լինում իր դայեակի հետ և նայում էր թէ ինչպէս գիւղի կանայք կժերը լցնում էին, դնում ուտներին ու տանում. ցոյց տուաւ հարեանների բոլոր աղջիկներին, Քէթօյի հասակակիցներին, որոնց հետ նա փոքր ժամանակ յաճախ խաղում էր, կանչեց նրա դայեակին ուրիշ գիւղից, որպէսզի գուցէ նրան ճանաչէր, ցոյց տուաւ նրա խաղալիքները, որ արկղում անկորուստ պահած ունէր, միքանի անգամ Քէթօյի ուշադրութիւնը հրաւիրեց եկեղեցու զանգահարութեան, որի հետ մանկութեան ժամանակ ծափահարում էր, բայց ոչ մի հնար չօգնեց:

Ծնողները Քէթօյի համար կարեցին այնպիսի գեղեցիկ վրացնակ շորեր, որ ամեն մի նորատի աղջկայ աչքը վրան կը մնար. բայց Քէթօն բոլորովին չմտեցաւ և սրանից յետոյ աւելի ևս սիրեց լեզգու շորերը...

Վերջը հարեաններից մէկը ասաց Մագդանին՝ «Մագդան, Քէթօն շատ նման է քեզ. իսկ և իսկ մայրն է: Կանգնիր ձեր մեծ հայելու առաջ և կողքիդ կանգնացրու Քէթօյին: Նա կը նայի հայելու մէջ, կը համեմատի երկու գէմբերը. իր և քո գէմբի մէջ մեծ նմանութիւն կը տեսնի

և գուցէ այն ժամանակ մի ճար լինի»։ Մագդանը այդ էլ փորձեց։ Այդ բանը Քէթոյին շատ զարմացրեց, իբրև մի տարօրինակ վարմունք Մագդանի։ Նա դէմքերին մինչև անգամ չնայեց, պարզ էր որ ոչ մի նմանութիւն չէր կարող նկատել։

Մատաղահաս աղջիկը ծնողների ձեռքից գնում էր։ Առանց հիւանդութեան թառամում էր, հալւում և քիչ էր մնում ընկներ մահուան գիրկը։

— Ոչ, ես այլևս չեմ կարող տանել այս երեխայի այսքան տանջանքներն ու շարժարանքները. եթէ այս միքաւնի օրուայ ընթացքում երեսը մեր կողմ չգարձնի, կը նստացնեմ ձիու վրայ, իմ ձեռքով կը տանեմ, կը յանձնեմ կուսակալին և իր կնոջը։ Ինչպէս երևում է արժանաւոր մարդիկ են եղել, որ այդպէս սիրուել են մեր հարազատ որդուց, ասաց Զուրաբը իր կին Մագդանին։

Սակայն Մագդանը այդպէս հեշտութեամբ չէր կարող թողնել Քէթոյին և նա պատրաստ էր իր ձեռքով թաղելու իր միակ աղջկան, քան թէ նորից և ընդամիշտ ուղարկել Գաղստանը։

ԻՆՉ ԱՐԱԻ ՕՐՕՐՕՅԻ ԵՐԳԸ


Այսպիսով անցաւ ապրիլ ամիսը և բացուեց գեղեցիկ մայիսը։ Հէնց առաջի օրը ամառուայ պէս ամպեց և սկսեց որոտալ։ Մինչև երեկոյ շարունակուեց յորդառատ և կենսատու անձրևը, իսկ երեկոյեան այնպէս պարզուեց երկինքը, որ ամպի կտոր անգամ չէր երևում. երկնակամարը ամբողջապէս լցուած էր փայլուն աստղերով. օդը մաքրուեց և անշուշտ այս էր պատճառը, որ Քէթօն այն գիշերը հանգիստ քնեց և երկրորդ օրը վերկացաւ քիչ կազդուրուած։

Աննման առաւօտ էր. ամբողջ շրջակայքը ողողուել էր պայծառ արևի ճառագայթներով և այդ լոյսի տակ բոյսերի վրայ եղած առաւօտեան ցօղը հազար և մի գոյներ էր արտայայտում։ Անտառը լիքն էր թռչունների կենդանացնող ճւղլոցով։ Քարթուելածէի այգում վարդի կոկոնները հիանալի կերպով բացուել էին և շուրջը տարածել անուշահոտ բուրմունք։ Այդ վարդերի մօտ քաղցր ձայնով դայլալում էր սոխակը, որ այնտեղ ծառի վրայ էր տեղաւորուել։ Բնութիւնը հրճուում, տօնում, կարծես հազար ու մի հարսանիք միանգամից էր կատարում։

Բնութիւնը անփոխարինելի բժիշկ է մարդկային վըշտերի ու ցաւերի։ Թեթևացրեց նաև Քէթոյի վշտահար սիրտը և նրա դէմքի վրայ՝ պարզ երևում էր, նուազում էր այն սարսափելի վիշտը, որ մինչև այժմ ճիւղի նման ճնշում էր նրա սիրտն ու հոգին և թոյլ չէր տալիս շրջապատող կեանքի վրայ մտածելու։ Առաջի անգամ սկսեց մտածել նրա մասին, թէ ինչնու համար այս օտար մարդիկ այսչափ սէր են ցոյց տալիս և ինչնու իր վշտերը նրանց այսչափ նեղութիւն է պատճառում։

Մայրը հեշտութեամբ նկատեց Քէթոյի մէջ այս փոփոխութիւնը և յուսադրուեց։ Մի կողմից այս յոյսը և միւս կողմից հիանալի առաւօտը Մագդանին լաւ տրամադրութեան բերին և նա ակամայից ինքն իրան սկսեց մըրմնջալ օրօրը։ Քէթոյին կորցնելուց յետոյ Մագդանի ձայնը ոչ-ոք չէր լսել։ Մագդանը նստած էր լուսամուտի մօտ, իսկ Քէթօն սենեակի մի անկիւնում փոքրիկ տախտի վրայ։ Մագդանը սկսեց ցածր ձայնով մըմնջալ, իսկ յետոյ իր ձայնի գեղեցկութիւնից յափշտակուած և իր սովորութեամբ սկսեց բարձր ձայնով երգել։ Փոքր ժամանակից յետոյ նա պատահմամբ հայեց Քէթոյի կողմը և սպշած մնաց։ Քէ-

Թոյի դէմքի վրայ պարզ նկատուում էր յուզմունք: Ակներն էր, որ ինչ որ մի բան ուզում էր յիշել, բայց չէր կարողանում պարզ յիշել: Նրա հոգու խորքում երկար ժամանակից ի վեր թաղուած յիշողութիւնը արթնանում էր,



բայց չէր կարողանում զարթնել: Գիտակցութեան յատակից ուզում էր մի ինչ որ ցանկալի յիշողութիւն ժայթքել, սակայն վերեւից ծալքերով դարսած այլ մասածմունք-

ները խանգարում էին նրա վերն բարձրանալուն: Մագդանը այս շաւ նկատեց և իր ձայնին տուաւ հրաշալի արտայայտութիւն և զրաւչութիւն: Առաջ այս տեսակ ձայնով Մագդանը շարունակ քաղցրացնում էր իր Քէթոյի ման-



կութեան օրերը: Մագդանի ձայնը կարողացաւ թափանցել մինչև հոգու խորքը, շարժեց նրան արմատից, և կենդանացրեց այնտեղ թաղուած մանկական յիշողութիւնների երանելի մնացորդները: Մագդանը ձայնին տալիս էր դիւթիչ ոյժ և միաժամանակ նայում էր Քէթոյին, անսահման

ժայռական սիրով լցուած: Քէթօն էլ իր հայեացքը չէր հե-
ռացնում մօր դէմքից և յուզուած աշխատում էր նրա
դէմքի վրայ կարդալ ինչ որ մի մեծ գաղանխք: Եւ կար-
դաց: Քէթօյի յուզուած դէմքը հեռզհեռէ խաղաղուեց և
նրա դէմքից բոլորովին ցրուեց սև ամպը, անսպասելի



կերպով պարզուեց նրա դէմքը, և ուրախութեան ժպիտն
սկսեց խաղալ նրա դէմքի վրայ: Նա յանկարծ վեր թռաւ
տախտից՝ «մայրիկ», կանչեց և արագութեամբ ընկաւ
Մագդանի գիրկը, փաթաթուեց երկու ձեռքով և սկսեց

ջերմ համբոյրներ քաղել: Մօր և աղջկայ աչքերից արտա-
սուքները հեղեղի նման թափուում էին. սակայն դրանք ու-
րախութեան և խնդութեան արտասուքներ էին:

Փոքր ժամանակից յետոյ Զուրաբն էլ ներս եկաւ:
Քէթօն ազատուելով մօր գրկից, դարձաւ դէպի նա՝ «հայ-
րիկ», կանչեց ու փաթաթուեց:

Ապա շուռ եկաւ մօր կողմը, նրա ձեռքից բռնելով,
տարաւ երկրորդ սենեակը, կանգնացրեց իր կողքին մեծ
հայելու առաջ, սիրելի հայեացք գցեց. բայց մի ինչ որ
բան միտքը խանգարեց: Նա արագութեամբ հեռացաւ հա-
յելուց, վազեց առաջին սենեակը, բացեց արկղը, հանեց
իր նոր վրացնակ շորերն ու հագաւ: Յետոյ նորից մօտե-
ցրեց ապշած մօրը հայելուն, կանգնեց նրա կողքին, համե-
մատեց դէմքերը և պարզ նկատեց, թէ որքան նման էր իր
մօրը, ապա դառնալով դէպի նա, փաթաթուեց նրա վզովը
և նորից սկսեց համբոյրներ քաղել: Առաջին անգամ Մագ-
դանի այս տեսակ վարմունքը ապշեցրեց նրան, իսկ այժմ
նոյն գործողութիւնը ինքն էր կատարում: Յետոյ մօրը
խնդրեց բանալ խաղալիքների արկղը և հրճուանքով դի-
մաւորեց իր վաղուցուայ բարեկամներին:

Առաջին յիշողութիւնը արթնացրեց երկրորդը, երկրորդը՝
երրորդը, երրորդը՝ չորրորդը և այսպիսով Քէթօյի աչքերի
առաջ հայելու նման բացուեց իր մանկութեան օրերը:
Մինչև այժմ նրան մայրն էր տանում դէս ու դէն, իսկ
այժմ ինքը Քէթօն հանգստութիւն չէր տալիս մօրը, և
տանում էր երբեմն անտառ, և այդպիսով գիւղի ամբողջ
ընտանիքը ման եկաւ: Յիշեց նաև իր մայրենի լեզուն,
չնայած որ շատ խօսքեր մոռացել էր, խօսելու ժամանակ
կանգ էր առնում, կամ լեզգերէն բառեր էր խառնում,
այդ ժամանակ մայրը յիշեցնում էր վրացերէն բառերը:

Երևաց, որ առաջին տարիների տպաւորութիւնները և ազդեցութիւնները ոչ մարել էին և ոչ էլ ջնջուել Քէթոյի մտքից, այլ խորը քնած էին, թաղուած նրա յիշողութեան խորքում, ինչպէս բոյսի սերմը հողի մէջ և նրա վերևից ծածկուած էր ամբողջ տաս տարուայ Դադատան եղած ժամանակ տեսածն ու զգացածը: Այս տպաւորութիւնները շարժել և արթնացնել կարող էր միայն մի ուժեղ և խոր ցնցում, ճիշտ այնպէս, ինչպէս բոյսի սերմը վերև են քաշում արևի կենսատու ջերմ ճառագայթները: Այս տեսակ խոր ցնցումը Քէթոյի յիշողութեան մէջ կարողացաւ միայն զարթեցնել ծնողական ձայնը, մանկական երգը— «օրօրը», որ ամենից աւելի խորն էր թափանցել Քէթոյի հոգու մէջ:

Բոլոր վաշխանեցիները՝ մեծ թէ փոքր, կին թէ տղամարդ, ուրախ էին Քէթոյի ուշքի գալով, գալիս էին շնորհաւորելու Մազգանին և նրա ամուսնուն և ուրախանում էին Քէթոյի վրայ: Քարթուելածէի ընտանիքում տիրում էր այնպիսի անսահման ուրախութիւն, որ միայն Քրիստոսի ժամանակ կարելի էր տեսնել, երբ Փրկիչը մահամերձին առողջացնում էր, կամ մեռելին կենդանացնում: Այս անսահման ուրախութեան շատ սագում էր նաև Մազգանի քաղցրահնչիւն երգը: Ինչպէս երկար ժամանակ առանց ջրի մնացած այծեամբ, որ ազահաբար վրայ է ընկնում մաքուր ջրին և շուտով չի կշտանում, այնպէս էլ Քէթօն, ամբողջ տասը տարի զրկուած իր սիրած զուարճութիւնից, ազահաբար լսում էր մօր երգը և վերջացնելու պէս իսկոյն երկրորդ անգամ էր երգել տալիս, և այդպէս շարունակ: Մազգանը յաճախ ասում էր՝ «չարդ տանեմ, որդի, քիչ հանգիստ թող, թէ չէ էլ ոյժ չմնաց»: Բայց Քէթօն բուժիչ դեղ ունէր այս յոգնածութեան դէմ— փաթաթուել

մօրը և ջերմագին համբոյրներ քաղել: Քէթօն հիանում էր մօր գեղեցիկ ձայնով և միևնոյն ժամանակ ինք ևս սովորում էր երգել:

Քէթօն ԵՒ ԻՐ ՄՕՐԱՅԵՂ-ՆՕՐԱՅԵՂԸ

Մի անգամ, երբ Քէթօն ընտելացաւ նոր կեանքին հարցրեց իր մօրը. «մայրիկ, չարդ տանեմ. արդեօք չի կարելի որ Դադատան բարև ուղարկեմ որևէ մէկի միջոցով»:

Մազգանին այս խօսքերը դուր չեկաւ և վախեցաւ:

— Մի վախենար, մայրիկ, — որդիական սիրով ասաց Քէթօն: — Քեզ և հօրս սիրում եմ, իբրև հարազատ ծնողներին, իսկ նրանց յարգում եմ, իբրև իմ խնամատարներին և դաստիարակներին: Եթէ նրանք չլինէին, ո՞վ գիտէ ո՞ւմ ձեռքին պիտի ընկնէի և ինչ կը պատահէր ինձ:

Բարև ուղարկեցին կուսակալին և նրա կնոջ յատուկ ուղարկուած մարդկանց միջոցով և հետնեքն էլ նուէր կախէթու ագնիւ գինի, որ այն ժամանակուայ լեզգիները կախէթցիներէից պակաս չէին խմում:

Ամառն անցնում էր, մայրը տեսնում էր, որ Քէթօն շատ սրտով ուզում էր տեսնել մօրացեղ-հօրացեղին. բայց չէր համարձակուում ասել: Մի անգամ Մազգանը ասաց Քէթոյին՝ «գիտե՞ս, հոգիս, թէ իմ մէջ ի՞նչ միտք ծագեց. այժմ այգեկութիւն մօտենում է, Դադատանում այգիներ չկան և այնտեղ այգեկութ չի լինում: Արի այգեկութին հրաւիրենք քո մօրացեղ-հօրացեղին և ուրախացնենք. լաւութեան փոխարէն հարկաւոր է լաւութիւն հատուցանել»: Ինչան շնորհակալութեան Քէթօն զգացուած մօր վզովը փաթաթուեց:

Կուսակալը և նրա կինը շատ էին ուզում Քէթոյին

տեաներ: Այդ պատճառով այգեկութի հրաւէրը շատ ուրախացրեց նրանց և որոշեալ ժամանակին գնացին իրանց որդեգրուհու ծնողների մօտ: Քէթօն ծնողների թողալու թեամբ իր հօրացեղ-մօրացեղին լեզգի շորերով դիմաւորեց: Քէթօյի ուրախութեանը չափ չկար, քանի որ նա միասին էր տեսնում չորս թանգազին իւրայիններին, որոնց ամբողջ հոգով սիրում էր:

Զուրբան ու կուսակալը բարեկամացան: Մագգանն էլ սրտանց սիրեց կուսակալի կնոջը և այդ պատճառով ամեն աշնան նրանց այգեկութին հրաւիրելը սովորութիւն դարձրին: Այս սովորութիւնը չփոխուեց նաև այն ժամանակ, երբ մի քանի տարուց յետոյ Քէթօն ամուսնացաւ մօր ծննդավայրում և պսակուեց մի արժանաւոր Քարթլեցի երիտասարդի հետ: Ամեն տարի սեպտեմբերին Քարթուելի ձի մօտ Քարթլից գալիս էին աղջիկն ու փեսան, իսկ Դադստանից կուսակալը իր կնոջ հետ և իր շքախմբով միասին: Չենք կարծում, թէ որևէ մէկը իր կեանքի մէջ այգեկութն այնպէս ուրախ և զուարթ անցկացնէր, ինչպէս Քէթօն:

Քէթօնի ԲԱՆՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Միթէ Քէթօն միայն այգեկութի ժամանակ էր ուրախ և բախտաւոր: Ո՛չ, ուրիշ անգամ էլ:

Իմաստունները ասել են և ասում են, որ մարդու բախտաւորութեան լաւագոյն աղբիւրը սիրող սիրան է: Անչափ մաքուր սէր դէպի մերձաւորները իրան սիրողի կեանքն էլ է քաղցրացնում, մերձաւորինն էլ: Մարդս հեշտութեամբ կարող է կորցնել հարստութիւնը, առողջութիւնից և գեղեցկութիւնից էլ զրկուել, ազգականներին էլ անժա-

մանակ թաղել, սակայն սիրող սիրալը ջերմացնում ու լուսաւորում է նրա կեանքը մինչև գերեզմանի դուռը:

Քէթօն իր մօրից ժառանգել էր սաստիկ սիրող սիրա և այս տեսակ սրտին շատ սագեց նրա հետ պատահած հագուազիւտ անցքը: Այդ բանը ուժեղ ցնցումներ առաջացրեց Քէթօյի սրտի մէջ և վարժեցրեց: Սրտի խոր զգացումները նախ ծնողների սիրուց աճեցին, յետոյ սաստիկ ցաւերի, որ կրեց նա, երբ լեզգիները փախցրին նրան, յետոյ հօրացեղ-մօրացեղի սիրուց, սրանից յետոյ սաստիկ խոր և երկարատև վշտից, որ յետևեց հօր փախցնելուն, այնուհետև հարազատ ծնողների սէրը և հօրացեղ-մօրացեղի սէրը միասին միացած Քէթօյի սրտում, վերջը այս բանին աւելացաւ արժանաւոր ամուսնու և որդկերանց սէրը և այսպիսով Քէթօյի սիրալը դարձաւ մի անսպառ սղբիւր մարդասիրութեան և սիրոյ անշէջ լամպար դէպի իր մերձաւորները: Քէթօյի փորձառութիւնը կեանքի մէջ թէ մեծ դժբախտութեան և թէ ուրախութեան ժամանակ, միշտ, ամեն տեղ, ամեն երեխայի համար քաղցր փաղաքշանք ունէր, արտասուք դժբախտների, մխիթարութիւն ճնշուածների, օգնութիւն կարօտեալների, սղորմութիւն աղքատների համար: Նա լեզգիներին վրացիներից չէր ջոկում, Դադստանն էլ Վրաստանից,— և քանի որ սէրը սէր է ծընում այդ պատճառով վրացիները և լեզգիները կարծես թէ մրցում էին միմեանց հետ, թէ ով աւելի շատ յարգանք, պատիւ և սէր ցոյց կը տար Քէթօյին: Քէթօն իր ազնիւ սրտով, իր շուրջը սփռում էր սփոփանք և մխիթարութիւն, ինչպէս վարդի ծաղկած թուփը անուշահոտութիւն: Եւ ինչպէս որ վարդի թփով բոլորեքեան գմայլում են, այնպէս էլ բոլորեքեանք գմայլում էին ու սիրում Քէթօյին: Քէթօն էլ միաժամանակ սիրում էր իր

մերձաւորներին և բախտաւոր էր: Սիրել և սիրուել՝ միթէ
սրանից էլ լաւ բան կարող է լինել այս աշխարհի երեսին:

Աստուած ձեր սրտի մէջ էլ աճեցնի այդպիսի վառ
սէր, իմ պատանի ընթերցողներ, դէպի ձեր մերձաւորնե-
րը, Քէթոյի նման ապրի՞ք՝ միմեանց սիրելով, բախտաւոր
և երկար տարիներ...



«Ազգային գրադարան»



NL0383182

74.496